

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ ԵՎ ԶՈՐՋ ՍՈՐՈՍԸ

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բաց հասարակության հիմնադրամները հիմնադրվել է աշխարհի խոշորագույն բարերարներից մեկի՝ Զորջ Սորոսի կողմից, ով 1984 թ.-ից ի վեր ֆինանսական շուկաներում ձեռք բերված իր սեփական ունեցվածքից 32 միլիարդ ԱՄՆ դոլար է նվիրաբերել:

Բաց հասարակության հիմնադրամները ողջ աշխարհում աջակցություն է ցուցաբերել այն անհատներին ու կազմակերպություններին, որոնք պայքարում են արտահայտման ազատության, թափանցիկության, հաշվետու կառավարության համար, ինչպես նաև այն հասարակություններին, որոնք խթանում են արդարության ու հավասարության հաստատումը: Այս բարեգործությունը հաճախ ուղղված է եղել նրանց, ովքեր խտրականության են ենթարկվում միայն իրենց ինքնության պատճառով, ինչպես օրինակ՝ Եվրոպայի գնչուները և հասարակության մեծամասնությունից դուրս մղված անձիք:

Սորոսն անձամբ կրել է նման անհանդուրժողականության դրսևորումներ: Ծնված լինելով 1930 թ. Հունգարիայում՝ նա վերապրել է երկրի նացիստական բռնազավթումը, որը հանգեցրեց Հունգարիայում բնակվող ավելի քան 500 000 հրեաների սպանությանը: 1947 թ.-ին, երբ իշխանության եկան կոմունիստները, Սորոսը հեռացավ Բուդապեշտից՝ մեկնելով Լոնդոն, ապա ներգաղթեց Միացյալ Նահանգներ՝ մուտք գործելով ֆինանսների ու ներդրումների աշխարհ, որտեղ նրան վիճակված էր մեծ կարողության տեր դառնալ:

Սորոսն իր բարեգործական գործունեությունը սկսել է 1979 թ.-ին՝ կրթաթոշակներ տրամադրելով ռասայական խտրականության ենթարկվող սևամորթ հարավաֆրիկացիներին: 1980-ական թվականներին նա օժանդակել է տեսակետների բաց փոխանակմանը կոմունիստական Հունգարիայում: Բեռլինի պատի անկումից հետո նա ձգտել է ամրապնդել ժողովրդավարական գործընթացներն ու հաստատությունները ողջ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում:

Սառը պատերազմի ավարտից հետո նա իր բարեգործական գործունեությունն ընդլայնեց նաև Միացյալ Նահանգներում, Աֆրիկայում և Ասիայում՝ օժանդակելով բազմատեսակ նոր գործողությունների, որոնք ուղղված էին առավել հաշվետու, թափանցիկ և ժողովրդավարական հասարակությունների ստեղծմանը:

ՀԱՄԱՌՈՏ ՏՎՅԱԼՆԵՐ

2017 թ.-ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵՆ

940.7

ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ


ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԸ՝ ՍԿԱՍԾ 1984 թ.-ԻՑ

14

ՄԼՐԴ ԱՄՆ ԴՈԼԱՐ

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

+1500



ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ ԵՎ ԶՈՐՋ ՍՈՐՈՍԸ

9

ՓԱՍՏ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

01 Ներկայումս Հիմնադրամները ներառում են քսաներեք ազգային և տարածաշրջանային Հիմնադրամներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տեղական տնօրենների խորհուրդը, որի անդամները վերահսկում են աշխատանքները և սահմանում ֆինանսավորման գերակայությունները՝ տեղական կարիքների համաձայն:

02 Առաջին հիմնադրամը հիմնվել է Հունգարիայում՝ 1984 թ.-ին, իսկ նորագույնը՝ Մյանմարում՝ 2016 թ.-ին:

03 Հիմնադրամները, գործընկեր կազմակերպությունների մեծ մասին տրամադրում են ֆինանսավորման ոչ ավել քան 33%-ը, որպեսզի ապահովվի նրանց ինքնավարությունը և ստեղծվի կայուն ֆինանսական հիմք՝ հետագա գործողությունների համար:

04 Հիմնադրամներն երկրորդ խոշորագույն մասնավոր բարեգործական կազմակերպությունն է «Բիլ և Մելինդա Գեյթս» հիմնադրամից հետո: ԱՄՆ-ի հաջողված գործարարների կողմից բարեգործության այս շարունակական ավանդույթը սկիզբ է առել այնպիսի անձանցից, ինչպիսիք են՝ Էնդրյու Կարնեգին, Ռոբֆեյլեր և Ֆորդ ընտանիքները:

05 Հիմնադրամները հանդիսանում է Եվրոպայի գնչու փոքրամասնությանն ուղղված նախաձեռնությունների ամենախոշոր մասնավոր ֆինանսավորողը:

06 Սկսած 1993 թ.՝ մենք տասնյակ միլիոնավոր դոլարներ ենք տրամադրել մարդասիրական օգնության և օժանդակության ծրագրերին, որոնք իրականացվել են նախկին Հարավսլավիայի երկրներում պատերազմների ընթացքում և հատկապես պաշարված Սարևոյում:

07 Սկսած 1996 թ.-ից՝ մենք աշխատում ենք Միացյալ Նահանգներում: ԱՄՆ-ի մեր ծրագրերը կազմում են մեր ֆինանսավորման աշխատանքների մոտ 17%-ը և ներառում են աջակցություն քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և թմրամիջոցների մասին օրենքներին, ժողովրդավարական մասնակցության ամրապնդմանը և ներգաղթի մարդասիրական օրենքների իրականացումը:

08 Կրկին ու կրկին, Հիմնադրամները մասնակցել է վիճահարույց հարցերի շուրջ քաղաքականության քննարկումներին, որոնցից թերևս այլ ֆինանսավորողները խուսափում են: Մենք հպարտ ենք աշխատել այն մարդկանց հետ, ովքեր մերժվում են հասարակության կողմից՝ միայն իրենց ինքնության պատճառով:

09 Մեր անունն արտացոլում է մեր փիլիսոփայության հիմնադրի՝ Կառլ Պոպպերի ազդեցությունը: Իր Բաց հասարակությունը և նրա թշնամիները գրքում Պոպպերը պնդում է, որ ոչ մի փիլիսոփայություն կամ գաղափարախոսություն ճշմարտության վերջնական դատավորը չէ, և հասարակությունները կարող են բարգավաճել միայն այն ժամանակ, երբ թույլ տան ժողովրդավարական կառավարում, արտահայտման ազատություն և անհատական իրավունքների նկատմամբ հարգանք: